

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



# ԱՐԻՄՈՒԹ

---

## Ի. ՏՈՒՐԻՆԻ

1925

891.71  
Տ-99

Տ. 23 ամ 1923

19 NOV 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՉՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարիատ բոլոր յերեների, միացե՛ք.

31.71  
S-99

հ. ՏՈՒՐԳԵՆԵՎ

ԿՐ.

# ՄՈՒՄՈՒ

ՊԱՏՍՎԱԾՔ ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՑ



Թարգմ. Ա. ԶՈՐԵԱՆ

Բ տիպ



ՊԵՏՐՈՎ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ - Խ 214.

ՅԵՐԵՎԱՆ - 1925.

Հայության մասրը և կայության



2379-54

**Sburgh 5,000**

Պետհրատի II տպարան Յերևանում

U P U S U R U V

Մրանից 60—70 տարի առաջ Ռուսաստանի գյուղացիները  
ճորտ եյին յեվ կազմում եյին կալվածատերերի սեփականությունը.  
Նրանք չունեյին հող, իրավունք յեվ ազատություն։ Այդ բոլորը  
կալվածատերերի ժեռքին եր։ Ամբողջ տարին աշխատում եյին  
նրանք կալվածատերերի համար, մշակում եյին նրանց հողերը,  
կերակրում յեվ հաց եյին տալիս նրանց։ Իսկ կալվածատերերը  
նրանց նայում եյին, ինչպես մի ապրանքի, վորին ինչ ոգեն՝  
կարող են անել։ Չսիրած ճորտին ծախում եյին, ինչպես անա-  
սուն, կամ զինվոր եյին դրկում, իսկ սիրած ճորտին՝ կին թե  
մարդ, տնից-տեղից զըկելով՝ յերքեմն կինը մարդոց բաժա-  
նելով, մարդը կնոցից, բերում եյին իրենց տան ծառա։  
Ծառ հաճախ ել ամենաթեթեվ հանցանքի համար ճորտին ճի-  
պրոտի հարվածներ եյին տալիս, որերով զրկում եյին հացից,  
բանտարկում կամ կապում կատաղի ծիերի պոչից յեվ բաց  
թողնում արձակ դաշտերում։

Յեկամունքը է այսպիսի հարցութակոր, ուներ այսպիսի հազարակոր, տասնյակ հազարներով ճորտեր:

Այս գրվածքի հեղինակ Իվան Տուրգենևին ինքը կալվածատիրոջ վորդի յեր: Նրա մայրը մի դաժան կին եր յեվ վորպես կալվածատիրունի շտեսնված Ներլություններ եր տալիս իր ճորտերին: Մանուկ Տուրգենևին ապրեց յեվ մեծացավ ճորտերի շրջանում, ~~ու~~ մուտք մոր, նրա կառավարիչների ու գործակատարների հաստությունները, թշվար ճորտերի տանջանքները յեվ հե-

տո, հասակն առնելով, սկսեց զրել նրանց զրկանքներով և  
կյանքի մասին: Իր զրվածքներով նա ցուց եր տալիս, վոր ճոր-  
տերն ել մարդիկ են, նրանք ել ունեն սիրտ յեվ մարդկային  
զգացումներ յեվ չի կարելի պահել նրանց անասունների վիճա-  
կում: Յեվ ցնցող պատկերներով, կծու խոսքերով Տորգենեվն իր  
զրվածքներում բողոքում եր ճորտատիրական անիրավ, հակա-  
մարդկային կարգերի դեմ: Յեվ նրա բողոքը դարձավ հասարա-  
կական ուժ ու նպաստեց մեծապես ճորտերի կիսատ ազատազրու-  
թյանը 1861 թվին:

Ճորտատիրական այդ շրջանը նկարագրել են շատ ուս  
գլողներ, բայց զբանցից յեվ վոչ մեկը իվան Տորգենեվի պես չի  
պատկերացրել նրանց թշվառ կյանքը յեվ վոչ մեկի զրվածք-  
ները այն նշանակությունն ու ազդեցությունը չեն ունեցել ճոր-  
տերի ազատազրության համար, ինչպես Տորգենեվի «Նորտորդի  
Հիշտակարանը», վոր ճորտերի կյանքից առնված զեղարվես-  
տական ցնցող պատկերների մի ժողովածու յէ:

Տորգենեվի այդ զբվածքներից ե յեվ «Մումուն», վոր Գրա-  
տարակում ենք մեր մանուկ յեվ պատանի ընթերցողների համար:

#### ՊԵՏԻՐԱՏԻ ԽՄՔԱԳՐԱԿԱՆ ԿՈՂԵԳԻԱ

## ՄՈՒՄՈՒՆ



1.

Մոսկվայի հեռավոր փողոցներից մեկում սպիտակ սյուներով և ծոված պատշգամբով մի գորշ տան ապրում եր յերբեմն մի ազնվական այրի կին բազմաթիվ ճորտ—ծառաներով շրջապատված։ Նրա վորդիները ծառայում եյին Պետերբուրգում, աղջիկները ամուսնացել եյին։ Նա շատ սակավ եր յերեսում հասարակության շրջաններում և իր ժլատ ու տըխուր ծերության վերջին տարիները անց եր կացնում առանձնության մեջ։ Նրա կյանքի անուրախ ու մռայլ ցերեկը վաղուց եր անցել, բայց նրա յերեկոն ել գիշերից խավար եր։

Նրա ծառայողների մեջ ամենից աչքի ընկնողը դոնապան Գերասիմն եր՝ բարձրահասակ և վիթխարի մի տղամարդ, վորի ծնե խուլ ու համար եր։ Տիրուհին նրան բերել եր զյուղից, ուր նա մեն-մենակ, յերբայրներից բաժան՝ ապրում եր մի փոքրիկ խրճիթում։ Անսովոր ուժի տեր՝ նա չորս մարդու բան եր անում մենակ։ Տեսնողը հաճույք եր զգում, թե ինչպես ե նա վարում, հնձում, կասում։ Մշտական լըսությունը առանձին հանդիսավորություն եր տալիս նրա աշխատանքին։ Նա յերեւլի ունչպար եր և, յեթե նրա դըքքախտությունը չիներ—ամեն մի աղջիկ սիրով կառներ նըրան։ Բայց ահա Գերասիմին բերին Մոսկվա, յերկարաճիտ կողիկներ առան, ամառվա համար կաֆտան կարեցին, ձմեռ-

վահամար քուրք, ձեռը բահ ու ավել տվին և դամապան կարգեցին:

Հենց սկզբից իր նոր կյանքը բնավ դուր չեկավ նրան: Մանկությունից նա սովոր եր գաշտային աշխատանքի և դյուշական կյանքի: Տեղափոխվելով քաղաք՝ նա չեր հասկանում ինչ ե կատարվում իր հետ. ձանձրանում եր և տարակուում, այնպես ինչպես տարակուում ե մի արջառ, վորին հանկարծ կանանչ, թարժ խոտից կտրելով վերցնում են ու դնում յերկաթուղու վագոնը և շղկոցով ու թրիկոցով տանում. թե ուր հայտնի չե: Իր նոր գործը, դյուղական ծանր աշխատանքից հետո, Գերասիմին խաղ ու պար եր թրվում. կես ժամում նա ամեն ինչ վերջացնում եր և բակի մեջաեղ կանգնում ու բերանաբաց նայում անցուդարձ անող մարդկանց, կամենալով կարծես իմանալ իր անհասկանալի կյանքի բացատրությունը, կամ թե չե քաշվում եր վորեե անկյուն և, թին ու ավել հեռու շպրտելով յերեսն ի վայր ընկնում գետին և ժամերով անշարժ պառկում կրծքի վրա, ինչպես գերված մի գաղան: Բայց մարդն ընտելանում ե աւմեն բանի, և Գերասիմն ել վերջի վերջո, ընտելացավ քաղաքի կյանքին: Գործը մեծ չեր. նրա պարտականությունն այն եր, վոր բակը մաքուր պահի, որական յերկու անգամ տակառով ջուր բերի, փայտ կտրի և ջարդի խոհանոցի ու տան համար, ոտար մարդիկ չթողնի և գիշերները պահապան կանգնի: Յեվ պետք ե ասած, նա իր պարտականությունը յեռանդով կատարում եր: Յերբեք բակում չեյիր տեսնի չոփի մի կտոր կամ թափված աղբ: Յեխ ժամանակ, յերբ ձին չկարողանար ջրի տակառը հանել մի վորեե ցեխ տեղից, բավական եր միայն, վոր Գերասիմն ուսով հրեր, վոչ միայն տակառի սայլակը, ձին ինքն ել եր ծուլ լինում տեղից, կամ յերբ սկսում եր փայտ ջարդել, կացինը նրա ձեռին զբնգում եր պակու պես և տաշեղներն ու փայտի կտորտանքը թուչում եյին

ամեն կողմ. իսկ ինչ վերաբերում ե գողերին-բանին, դա արդեն, այն բանից հետո, յերբ մի անգամ գիշերը յերկու գող բոնելով նրանց ճակատները խփել եր իրար, այնպես եր խըփել, վոր հետ թեկուզ նրանց վոստիկանատուն չտաներ եր թաղում բոլորն սկսեցին հարգել նրան, մինչև անգամ ցերեկվա անցորդները, արդեն վոչ թե գողեր, այլ պարզապես անձանոթ մարդիկ, ահարկու դռնապանին տեսնելիս՝ հեռու եյին անցնում:

Տան մյուս սպասավորների հետ Գերասիմը վոչ թե բարեկամական, այլ մոտիկ հարաբերության մեջ եր. նա գրանց համարում եր իրավորներ: Նրանք Գերասիմի հետ բացատրվում եյին նշաններով, և Գերասիմը նրանց հասկանում եր, ճշտությամբ կատարում եր բոլոր հրամանները, բայց իր իրավունքները նույնպես գիտեր. վոչվոք ծառայողներից չեր համարձակվի նստել նրա տեղը սեղանի շուրջը: Գերասիմն առհասարակ խիստ և լուրջ բնավորություն ուներ. ամեն բանում կարգ եր սիրում. մինչև անգամ աքաղաղները նրա ներկայությամբ չեյին համարձակվում կովել, այլապես վայ նրանց: Տեսներ թե չե, իսկույն յերկուսի վոտքերից ել կրոներ, մի քանի անգամ անիվի պես կպատեր ու կշպրտեր յուրաքանչուրին մի կողմ: Տիրուհու բակում կային և սագեր, բայց սագը հայտնի յե, վոր լուրջ և խոհեմ թոշուն ե: Գերասիմը նրանց վերաբերվում եր հարգանքով, հետեւում եր և կերակրում: Նրան տվել եյին մի խուց, վոր գտնվում ե խոհանոցի զըլին. այդտեղ նա իր համար, իր ճաշակով, կաղնի տախտակներից շինել եր չորս վոտանի մի տախտ, իսկական հսկայի մի տախտ, վոր յեթե հարյուր փութ բան գնեյիր վրան—չեր ձկի: տախտակի տակ գտնվում եր մի պինդ-ամուր սնդուկ, անկյունում զրված եր նույնպիսի սեղան, իսկ սեղանի կողքին մի յեռոտանի նստարան: Գերասիմն իր խուցը փակում եր կողպեքով և բալանկին կախում իր գոտկից: Չեր սիրում, վոր մոտը մարդիկ գնան-դան:

2.

Այսպես անցավ մի տարի, և այդ տարվա վերջում Գերասիմին պատահեց մի փոքրիկ դեպք:

Իրիկնադեմ եր: Գերասիմը հաճիստ անցնում եր գետափով և ջրին նայում: Հանկարծ նկատեց, վոր մի ինչ-վոր բան հենց ափի մոտ շարժվում եր տղմի մեջ: Նա կուցավ և տեսավ մի փոքրիկ շան լակոտ՝ սկ ու սպիտակ բծերով, վոր չնայած իր ջանքերին, վոչ մի կերպ չեր կարողանում ջրից դուրս գալ. բարձրանում եր, սահում և դողդողում իր ամբողջ թաց, նիհար մարմնով: Գերասիմը նայեց խեղճ շնիկին, հետո մի ձեռով վերցրեց, կոնատակը դրեց նրան և մեծ-մեծ քայլերով շտապեց տուն: Յերբ հասավ և մտավ իր խուցը, փրկած շանը դրեց տախտի վրա, ծածկեց իր հաստ վերնազգեստով, ապա՝ նախ վազեց գոմը ծղնոտի, հետո խոհանոցը մի բաժակ կաթի: Վերադարձավ, վերարկում զգուշությամբ յետ քաշեց, ծղնոտը փռեց շան տակ ու կաթը դրեց տախտի վրա՝ նրա առաջ: Խեղճ շնիկը ընդամենը յերեք շարթական եր. աչքերը նոր բացվել ելին, մի աչքը նույն իսկ փոքր ինչ մեծ եր թփում մյուսից. բան լակել դեռ չեր կարողանում. դողում եր և աչքերը կուչ ածում: Գերասիմը յերկու մատով բռնեց նրա գլուխը և դունչը մեկնեց կաթին: Փոքրիկ շունը հաճիստ սկսեց ափահարար լակել կաթը և փնչացնել միաժամանակ: Գերասիմը նայում եր նրան, նայում և հանկարծ ծիծաղից թուլանում... Ամբողջ գիշեր նա քաշ յեկավ այդ փոքրիկ շան հետ. սրբեց, չորացրեց նրան, ծած-

կեց և, վերջապես, քնեց նրա կողքին մի ուրախ և խաղաղ քնով:

Վոչ մի մայր այնպես չի խնամի իր յերեխային, ինչպես Գերասիմն եր խնամում իր շնիկը: Փոքրիկ շունը սկըզբում շատ թույլ եր, նիհար և տգեղ, բայց հետզետե իրան հավաքեց, լցվեց, իսկ ութ ամսից հետո, շնորհիվ իր ազատարարի անխոնջ հոգատարության, դարձավ սպանական ցեղի մի լավ շուն՝ յերկար ականջներով, մազոտ խողովակածն պղոչով և արտահայտիչ խոշոր աչքերով: Նա զարմանալի կապված եր Գերասիմին և մի քայլ անգամ չեր հեռանում նրանից. բոլոր ժամանակ հետևում եր նրան, պոչը շարունակ շարժելով: Գերասիմը նրա անունը գրեց Մումու (համրերը գիտեն, վոր իրենց հանած ձայնը գրավում եռլիշների ուշադրությունը): Տան մարդիկ բոլորն ել սիրեցին նրան և նույնպես Մումու ելին կանչում: Մումուն անչափ խելոք եր. մոտենում, քննում եր բոլորին, բայց սիրում եր միայն Գերասիմին: Գերասիմն ինքը գժի պես սիրում եր նրան... ուստի նրան դուր չեր գալիս, վոր ուրիշները շոյում են իր շանը. վախենում եր, ինչ և, հայտնի չե: Գերասիմին առավոտները Մումուն եր զարթեցնում փեշից քաշելով, սանձից բռնած սայլակի մոտ եր բերում ջրկիր ձիուն, վորի հետ լավ բարեկամ եր, գեմքին լրջություն տված Գերասիմի հետ զնում եր գետը, հսկում եր նրա ավելներն ու թիկը և վոչ-վոքի մոտ չեր թողնում իր տիրոջ լսցին: Գերասիմը նրա համար դռան մեջ մի անցք եր շներ, և Մումուն կարծես զգում եր, վոր ինքը միայն Գերասիմի խցում ել լիակատար տեր, ու այդ պատճառով ներս մտնելուն պես իսկույն ինքնազմն դեմքով թոշում եր տախտին: Նա գիշերը բոլորովին չեր քնում, բայց և անտեղի չեր հաջում, ինչպես վորեւ հիմար մի շուն, վոր յետին թաթերի վրա նստած, դունչը դեպի վեր, աչքերը

փակ՝ հաջում և ձանձրույթից, այնպես աստղերի վրա և,  
սովորաբար, յերեք անգամ իրար յետեից: Վաչ: Մումուն  
այդպես չեր. նա իր բարակ ձայնը ի զուր տեղը եր հանի  
յերեք. նա իր ձայնը հանում եր այն ժամանակ միայն,  
յերբ ոտար մի մարդ եր մոտենում իրենց պարսպին, կամ  
վորեւ մի տեղ կասկածելի աղմուկ եր բարձրացնում կամ  
շրջուն... Մի խոսքով Մումուն յերելի պահապանություն եր  
անում: Ճիշտ ե, նրանից բացի՝ բակում կար և ծեր շղթա-  
յակապ շուն, վորին սակայն յերեք, մինչև անգամ դիշեր-  
ները, բաց չեյին թողնում, և ինքն ել զառամած լինելով  
ազատություն չեր ել պահանջում. իր համար կուչ յեկած  
պառկում եր իր բնում և յերբեմն միայն լսեցնում եր իր  
խոպոտ հաջոցը, վոր իսկույն ել կտրում եր, կարծես ինքն  
ել զգալով վոր դա անոգուտ եր: Մումուն տիրունու տունը  
բոլորովին չեր մտնում, և յերբ Գերասիմը փայտ եր տա-  
նում ներս, նա մնում եր զուրսը և սանդուղի մոտ ան-  
համբեր սպասում Գերասիմին՝ ականջները սրած, զլուխը  
դարձնելով մեկ դեպի աջ, մեկ դեպի ձախ, նայած վոր կող-  
մից եր դռների թիւկոց լսվում:

3

Այսպես անցավ մի տարի ևս: Գերասիմը շարունա-  
կում եր իր դոնապանությունը և շատ գոճ եր իր վիճակից,  
յերբ հանկարծ մի անսպասելի դեպք պատահեց: Այն ե.  
գարնան մի գեղեցիկ որ տիրուհին իր տանն ապրող ազգա-  
կանունիների հետ անց ու դարձ եր անում հյուրասենյակում:  
Տրամադրությունը լավ եր, հանաքներ եր անում, ծիծա-  
ղում, հետի աղջիկներն ել ծիծաղում եյին և նույնպես  
հանաքներ անում, բայց առանձին ուրախություն չեյին զգում:  
տանն այնքան ել ուրախ չեյին լինում, վոր տիրուհու վրա  
ուրախություն եր գալիս, վորովինետև, ամենից առաջ, նա  
բոլորից պահանջում եր, վոր անկեղծորեն ու լիասիրտ մաս-  
նակցեն իր ուրախության, և բարկանում եր, յեթե վորեւ  
մեկի դեմքը չեր փայլում ուրախությունից, և յերկրորդ՝ նրա  
այդ ուրախ ըուպիները յերկար չեյին տեսում և, սովորաբար,  
փոխվում եյին մռայլ ու կծու տրամադրության:

Քաղցր ժպիտը շուրթերին հյուրասենյակում զբոսնելով  
տիրուհին մոտեցավ լուսամուտին:

Լուսամուտի առջև ծաղկանոց եր շինված, և հենց այդ  
ըուպեյին ծաղկանոցի մեջտեղը, վարդի թփի տակ, Մումուն  
պառկած՝ յեռանդով վոսկոս եր կոծում: Տիրուհին նկատեց  
նրան:

— Ահ, — բացականչեց նա հանկարծ, — սա ինչ շուն ե:  
Ազգականունին, վորին դիմեց տիրուհին, շփոթվեց և  
չիմացավ ինչ պատասխանել:

— Զը...ը... զիտեմ, — կմկմաց նա, — կարծես, կարծես...  
համբինն ե...

— Ահ, — ընդհատեց տիրուհին, — ի՞նչ սիրուն շնիկ ե. ասա-  
ցեք այստեղ բերեն: Վաղմւց ե նրա մոտ: Ի՞նչպես ե վոր յես  
մինչև հիմա սրան չեմ տեսել... Սացեք բերեն:

Ազգականուհին խսկույն թուավ նախասենյակ:

— Տղա, այ տղա — կանչեց նա, — Մումույին բերեք այս-  
տեղ: Շնուտ: Ծաղկանոցումն ե:

— Դրա անունը Մումու յե, — հարցը տիրուհին, — շատ  
լավ անուն ե:

— Այս, շատ, — արտասանեց ազգականուհին. — Շնուտ, Ստե-  
փան, շնուտ:

Ստեփանը, մի յերիտասարդ, վոր սպասավորի պաշտոն  
ուներ, նետվեց ծաղկանոց և տիս ե՝ քիչ եր մնացել բռնել  
Մումույին, բայց նա ճարպկորեն դուրս պիծավ նրա մատների  
տակից և, պոչը ցցած, վազեց Գերասիմի մոտ, վոր այդ  
ժամանակ խոհանոցի առաջ դատարկում եր ջրի տակառը:  
Ստեփանը վազեց նրա յետեկից և աշխատեց բռնել տիրոջ  
վոտների մոտ, բայց Մումուն շարունակ ծուլ եր լինում և  
խարս տալիս: Գերասիմը ժպտալով նայում եր այդ քաշկըռ-  
տուքին: Յերկար քաշ գալուց հետո Ստեփանը վերջապես  
զլուխը բարձրացրեց և նշաններով արագ հասկացրեց Գերա-  
սիմին, թե տիրուհին ահա քու շուն ուզում ե, պիտի իր մոտ  
տանել: Գերասիմը մի քիչ գարմացավ, բայց կանչեց Մու-  
մույին, վերցը և տվեց Ստեփանին:

Ստեփանը բերեց նրան հյուրասենյակ և դրեց հատակին:  
Տիրուհին փաղաքշական ձայնով նրան կանչեց իր մոտ: Մու-  
մուն, վոր իր որում այսպիսի շքեղ սենյակներում չեր յե-  
ղած՝ վախեցավ սաստիկ և նետվեց դեպի դմները, բայց Ստե-  
փանի կողմից հետ մղվելով՝ դողդողաց և պատին կպավ:

— Մումու, Մումու, արի ինձ մոտ, արի տիրուհու մոտ,  
ասում եր տիրուհին. — Արի, հիմար.. մի վախի.. արի:

— Մուտեցիր, Մումու, մոտեցիր խանումին, — ասում եյին  
տիրուհուն շրջապատող կանայք. — Մուտեցիր:

Բայց Մումուն տխուր նայում եր շուրջը և տեղից չեր  
շարժվում:

— Մի բան բերեք թող ուտի, — ասաց տիրուհին. — Ի՞նչ  
հիմարն ե, խանումին չի մոտենում: Ի՞նչից ե վախենում:

— Դեռ չի ընաելացել, — ասաց կանանցից մեկը յերկշոտ  
ձայնով:

Ստեփանը փոքրիկ պիսակով կաթ բերեց և դրեց Մումուի  
առջև, բայց Մումուն մինչև անգամ հոտ ել քաշեց. նա բոլոր  
ժամանակ դողում եր և առաջվա պես շուրջը դիտում:

— Ահ, ինչ հիմարն ես, — արտասանեց տիրուհին մո-  
տենալով և, կռանալով, ուզեց շոյել նրան, բայց Մումուն  
դողահար զլուխը թեքեց և ատամները չխկացրեց:

Տիրուհին ձեռը յետ քաշեց արագ:

Մի ակնթարթ լուսվյուն տիրեց: Մումուն մի թույլ  
կանչոց արձակեց, ասես ափսոսում եր արածի համար և  
ներողություն խնդրում:

Տիրուհին յետ քաշվեց և հոնքերը կիտեց: Շան հան-  
կարծակի շարժումը վախեցրեց նրան:

— Ախ, — բացականչեցին շրջապատող կանայք բոլորը  
միասին. — խոն չկծեց (Մումուն իր կյանքում յերեք վոչ-  
վոքի չեր կծած). — Ախանի:

— Կորցրու դրան, — խոնեց պառակը փոխված ձայնով. —  
Զզվելի շուն: Ի՞նչ կատաղածն ե:

Յեվ գանդաղ շուռ յեկավ ու գնաց դեպի իր առանձնա-  
սենյակը: Ազգականուհիները վախով նայեցին իրար և ուզեցին  
հետեւ նրան, բայց տիրուհին կանգնեցրեց նրանց, սառը նա-

յեց բոլորին ու արտասանեց. «Ո՞ւր եք գալիս վոր. յես հո ձեզ  
չեմ կանչում», և դնաց:

Կանայք հուսահատ ձեռները թափ տվին Ստեփանի վրա,  
Ստեփանը շանը բոնեց և զցեց դուրս, ուղիղ Գերասիմի վոտ-  
ների մոտ. Կես ժամ հետո արգեն տանը թագավորում եր մի  
խոր լոռություն. պառավ տիրուճին նստել եր իր բազմոցին փո-  
թորկաբեր ամպից ել մռայլ:

Մինչև յերեկո նրա տրամադրությունը վատ եր. վոչ-վոքի  
հետ չխոսեց, թուղթ չխաղաց և գիշերն անցըեց վատ: Իսկ  
հետեւալ որը կանչեց իր մոտ ծառայողների ավագ Գավրիլին:

— Ասա, խնդրեմ, — սկսեց նա, — այդ ինչ շուն եր, վոր  
ամբողջ գիշեր հաջում եր մեր բակում և չթողեց քնեմ:

— Շնչնը... Վարը... Գուցե խուզի շունը, — խոսեց Գավ-  
րիլ կմկմալով:

— Չգիտեմ, խուլինն եր, թե մի ուրիշինը, միայն չթողեց  
վոր քնեմ: Յես զարմանում եմ՝ այդքան շներն ինչի համար  
են: Հետաքրքիր ե: Զե վոր մենք մեր բակում շուն ունենք:

— Ինչպես չե, կա...

— Դե, ել ինչ. ավելորդ շունը մեր ինչին ե պետք:  
Անկարգություներ ե անելու միայն: Նայող չկա, ավագ չկա  
— ահա թե ինչ: Յեկ խուլի ինչին ե պետք շունը: Ո՞վ ե նը-  
րան թույլ տվել, վոր իմ բակում շուն պահի: Յերեկ յես մո-  
տեցա լուսամուտին, տեսնեմ դա ծաղկանոցում պառկած,  
ինչ-վոր կեղտոտ բան բերել ու կոծում ե. իսկ այստեղ չե  
վոր վարդեր են տնկված:

Տիրուճին լոեց:

— Այսոր իսկ դրան չտեսնեմ... լսում ես:

— Լսում եմ:

— Այսոր իսկ... Առայժմ գնա:

Գավրիլը դուրս յեկավ:

Նախասենյակում պառկած եր Ստեփանը. զարթեցըեց

նրան և ինչ-վոր բան հրամայեց կիսաձայն, վորին Ստեփանը  
պատասխանեց կես հորանշելով, կես ծիծաղելով: Գավրիլը  
գնաց, իսկ Ստեփանը վեր թռավ տեղից, կաֆտանն ու կո-  
շիկները հաղալ և դուրս յեկավ շեմքում կանգնեց: Զանցավ  
հինգ րոպե, Գերասիմը յերեաց, իր անբաժան Մումույի ու-  
ղեկցությամբ, փայտի մի ահագին կապոց շալակին (աիրու-  
հին հրամայել եր, վոր իր ննջարանն ու առանձնասենյակը  
տաքացնեն մինչև իսկ ամառը): Գերասիմը կողքանց կանգ-  
նեց դուսն առջև, ուսով հրեց այն և իր բեռով մտավ ներս:  
Մումուն, ըստ սովորության, մնաց նրան սպասելու: Այդ ժա-  
մանակ Ստեփանը, հարմար ըոպեյից ոգտվելով, հարձակվեց  
հանկարծ նրա վրա, ինչպես ուրուրը ճուտի վրա, սեղմեց  
նրա կուրծքը գետնին, գրկեց և, մինչև անգամ գլխար-  
կը չծածկելով վագեվագ դուրս յեկավ բակից, նստեց առա-  
ջին պատահած կառքը և գնաց ուղիղ Ախոտնի Ռյադ: Այդ-  
տեղ նա գնող գտավ, Մումույին ծախեց հիսուն կողեկի այն  
պայմանով միայն, վորպեսզի նա մի շաբաթ զոնե կապած  
պահի նրան, և ինքն իսկույն վերադարձավ. բայց դեռ տուն  
չհասած՝ կառքից իջավ և տան բոլորքը շրջան անելով՝ յե-  
տերի փողոցից, պարսպի վրայով թռավ բակը. դռնով վա-  
խենում եր գնալ, վոր Գերասիմին չհանդիպի:

Սանք նրա անհանգստությունն իգուր եր: Գերասիմը  
վաղուց բակում չեր: Տնից դուրս գալով՝ նա անմիջապես  
դես ու դեն ընկավ Մումույին վորոնելու. նա դեռ չեր հի-  
շում, վոր Մումուն յերբեկցե չսպասեր իր վերադարձին,  
ու այս-այն կողմ ընկնելով՝ սկսեց փնտռել, կանչել նրան  
իրեն հատուկ ձայներով... վագեց իր խուցը, խոտանոցը,  
նետից փողոց—դես-դեն... Մումուն չկա, Մումուն կորել  
ե: Գերասիմը դիմեց մարդկանց, ամենահուսահատ նշաննե-  
րով հարց ու փորձ արագ. հողից կես արշին բարձր ցույց  
տալով՝ պատկերացըեց Մումույին ձեռներով... Ծառայող-

Ներից վոմանք, իսկապես չիմանալով ուր և չքացել Մումուն,  
գլուխները շարժում եյին միայն, մյուսները, վոր գլտեյին,  
պատասխանի փոխարեն ծիծաղում եյին, իսկ ավագ ապա-  
սավորը ծանր ու մեծ կերպարանք ընդունելով սկսեց ըղա-  
վել կառապանների վրա։ Այդ ժամանակ Գերասիմը դուրս  
յեկավ հայաթից։

Որը մթնում եր արդեն, յերբ նա վերադարձավ։ Նրա  
հոգնած տեսքից, անհաստատ քայլվածքից և փոշոտված շո-  
րերից կարելի յեր յենթադրել, վոր Մոսկվայի կեսը վոտի  
տակ և տվել։ Նա կանգնեց տիրուհու տան լուսամուտների  
դիմաց, աչք ածեց սանդուղքը, ուր յոթ ծառա յեր հավաք-  
ված կանգնած, յետ դարձավ և մի անգամ ել կանչեց «Մու-  
մուն»։—Մումուն չերեաց։ Գերասիմը նորից հեռացավ։ Բո-  
լորը նայեցին նրա յետեից, բայց վոչ մեկը վոչ ժպտաց,  
վոչ ել մի խոսք ասավ։ Իսկ հետեյալ առավոտ ամեն բանի  
հետաքրքիր ձիապահ Անտիպլիան խոհանոցում պատմում եր,  
վոր խուն ամբողջ գիշեր հառաչել եւ,

4.

Հետեյալ ամբողջ որը Գերասիմը չերեաց, այնպէս վոր  
նրա փոխարեն ջրի գնաց կառապան Պատապը։ Տիրուհին  
ծառայողների ավագ Գավրիլին հարցընց, թե կատարված ե  
արդյոք իր հրամանը։ Գավրիլը պատասխանեց, վոր կատար-  
ված եւ Մյուս առավոտ Գերասիմը իր խցից դուրս յեկավ  
աշխատանքի։ Ճաշին յեկավ հաց կերավ և գարձյալ գնաց ա-  
ռանց սրան կամ նրան գլուխ տալու։ Նրա դեմքը, վոր ա-  
ռանց այն ել զուրկ եր կենդանությունից, ինչպես բոլոր  
խուլ ու համբերինը, այժմ կարծես քարացել եր։ Ճաշից հե-  
տո նա կըին գուրս յեկավ հայաթից, բայց կարճ ժամանա-  
կով. վերադարձավ և խոկույն գնաց խոտանոց։

Գիշերն իջավ, լուսնյակ, պայծառ մի գիշեր։ Գերասիմը պառ-  
կած հառաջում եր և շարունակ շուռ ու մուռ գալիս անկողնում.  
մեկ ել հանկարծ զզաց, վոր իրը թե իր փեշը քաշում են.  
Նա ամբողջ մարմնով գողդողաց, բայց գլուխը ըբարձրացընց  
և մինչև անգամ աչքերը փակեց։ բայց ահա նորից փեշը քա-  
շեցին առաջվանից ավելի ուժզին։ Գերասիմը վեր թռավ…  
Նրա առաջ թոկի կառը զգին կանգնած եր Մումուն և պոչը  
շարժում եր շարունակ։

Յերկարածիդ մի ճիչ գուրս թռավ Գերասիմի անխոս կրծքից.  
Նա բռնեց Մումույին և սեղմեց կրծքին. Մումուն մի ակնթարթում  
լիզեց նրա քիթը, աչքերը, բեղերը և միրուքը… Գերասիմը կանգ-  
նեց, մտածեց, զգուշությամբ դուրս յեկավ խոտանոցից, նայեց  
լուրջը և, հավաստիսնալով, վոր իրեն վոչ-վոք չի տեսնի, շտա-

պեց իր խուցը։ Դեռ առաջուց Գերասիմը զլսի յեր ընկել, վոր շունն ինքն իրեն չի կորել, վոր նրան տարել են, յերեի տիրուհու հրամանով։ ծառայողները նշաններով բացատրել եյին նրան, թե ինչպես նրա Մումուն ուղեցել ե խանումին կծի՝ ուստի և Գերասիմը վճռեց իր միջոցները ձեռք առնել։ Ամենից առաջ նա Մումույին հաց ավեց, փայփայեց, պառկեցրեց ու ծածկեց, հետո սկսեց մտածել ու ամրող գիշեր մտածուժ եր, թե ինչպես անի, վոր Մումույին մի լավ տեղ թագցնի։ Վերջապես հնարք գտավ։ — ամբողջ ցերեկը Մումույին թողնի խցի մեջ և յերբեմն միայն կզա տեսնելու, գիշերը կտանի դուրս։ Դուն անցքը նա պինդ խցեց իր հին վերարկուով և ինքը, լույսը նոր բացված, բակումն եր արդեն, կարծես վոչինչ ել չեր պատահել։ Նա պահպանել եր նույնիսկ (անմեղ խորամանկություն) իր դեմքի տխուը արտահայտությունը։ Խեղճ խուը մտքով չեր ել կարող անցնել, վոր Մումուն իր կանչոցով կմատնի իրան։ Յեվ իսկապես շուտով տան մարդիկ բոլորն իմացան, վոր համրի շոնը վերադարձել ե և այժմ տանը փակված ե։ Բայց Գերասիմին ու շանը խղճալուց, մասսամբ ել, գուցե, Գերասիմի յերկուղից, զգացնել չտվին նրան, վոր իրենք նրա գաղտնիքը իմացել են։ Ծառայողների ավագը ծոծրակը քորեց միայն և ձեռը թափ տվեց։ «Ե՞ն, աստված իրա հետ։ Գուցե խանումը չի յել իմանում»։ Իսկ համրը յերբեք այսպիսի ջանասիրություն չեր ցույց տվել, ինչպես այդ որը։ Նա սրբեց, մաքրեց ամբողջ բակը, խոտերը արմատահան արավ, ծաղկանոցի ցանկի փայտերը կարգի բերեց, — մի խոսքով աշխատում, չարաչարվում եր այնպես, վոր մինչև անգամ տիրուհին ել ուշադրություն դարձեց նրա ջանասիրության վրա։ Որվա ընթացքում Գերասիմը մի յերկու անգամ թագուն զնաց փակված շանը տեսնելու, իսկ գիշերը նա Մումույի հետ միասին պառկեց վոչ թե խոտանոցում, այլ խցում, և միայն ժամը յերկում պուր յեկավ նրա հետ մաքուր

ողում զբունելու։ Ու բակում բավական յերկար զբունելով նա ուզում եր արգեն վերադառնալ, յերբ տան պարսպի այն կողմը, նրբափողոցում ինչ-վոր խշխցոց լսվեց։ Մումուն ականջները սրեց, մոռաց, մոտեցավ պարսպի պատին, հոտհոտեց և սկսեց բարձրածայն հաջել։ Ինչ-վոր հարբած մի մարդ յեկել եր այնտեղ զիշերելու։ Այդ ժամանակ տիրուհին հենց նոր միայն աչքը կացրել եր յերկարատև «ջղային հուզումից» հետո։ այդպիսի հուզումներ միշտ պատահում եյին նրան չափաղանց կուշտ ընթրիքից հետո։ Շան հանկարծական հաջոցը զարթեցրեց նըան, նրա սրտի զարկերն ավելացան։ «Աղջկերք, աղջկերք, նվազով կամչեց նա, — աղջկերք»։ Աղջիկները փախփորած ներս ընկան հնջարան։ «Ո՞յ, ոյ, մեռնում եմ, — խոսեց նա վշտահար, ձեռներն այս ու այն կողմ տարածելով։ — դարձար գարձար այդ շունչը... Ո՞յ, մարդ ուղարկեք բժշկի յետեվից, զրանք ինձ ուզում են սպանել... Շունը, գարձար այդ շունը։ Ո՞յ»։ և նա զլուխը հետ ձգեց, վոր նշան եր ուշաթափության։ Վագեցին բժշկի յետեվից։ Նա յեկավ, տիրուհուն ուզի բերեց և հետո, հանգստառթյան համար, կաթիլներ տվեց։ Տիրուհին ընդունեց կաթիլները և անմիջապես արտասվախան ձայնով սկսեց գանգատվել շանից, ծառայողների ավագ Գավրիլից, իր բախտից և այն բանից, վոր իրեն՝ խեղճ, պառավ կնոջը բոլորն աչքաթող են արել, վոր վոչ-վոք իրեն չի խըդում և բոլորն իր մահն են ցանկանում։ Մինչ այդ Մումուն շարունակում եր հաջել, իսկ Գերասիմն ապարդյուն կանչում եր նրան պարսպի մոտից։ «Ահա... ահա... դարձար...», խոսեց աիրուհին, և նրա աչքերը նորից կուլ գնացին։ Բժիշկն ինչ վոր բան շշնջաց աղջկան, նա վազեց նախասենյակ, զարթեցրեց Ստեփանին, իսկ Ստեփանը վազեց Գավրիլին զարթեցնի, և Գավրիլը բորբոքված հրամայեց տան բոլոր ծառայողներին վոտքի հանել։

Գերասիմը հետ նայեց, լուսամուսներում տեսավ լույս

ու ստվերներ. Նրա սիրտը վատ բան զգաց, Մումուն թե՛  
տակ առավ, վազեց մտավ իր խուցը և դուռը փակեց. Մի  
քանի բոպէ հետո հինգ մարդ ուզում ելին բանալ նրա դու-  
ռը, բայց նիզերի դիմադրությանը հանդիպելով՝ կանգ ա-  
ռան. Յեկավ Գավրիլը սաստիկ հևալով և բոլորին հրա-  
մայեց մինչև առավոտ մնալ այդտեղ ու հսկել, իսկ ինքը  
շտապեց սպասավոր աղջկերանց սենյակը և նրանց զլսա-  
վորի՝ Լյուբով Լյուբիմովսայի միջոցով հրամայեց հայտնել  
տիրուհուն, վոր շունը, դժբախտաբար, նորից ինչ-վոր տե-  
ղից հետ ե յեկել և վոր վազն ևեթ նա կենդանի չի լի-  
նի և տիրուհին թող վողորմած լինի՝ չբարկանա ու հանդիսա-  
մնա: Տիրուհին, հավանորեն, այնքան ել շուտ չեր հանդստա-  
նա, յեթե բժիշկը տասերկու կաթիլի փոխարեն քառասուն  
չտար. այդ ազգեց նրան և քառորդ ժամից արդեն նա քը-  
նած եր խոր ու խաղաղ քնով. իսկ Գերասիմը, ամբողջովին  
գունատ, պառկել եր իր մահճակալին և Մումույի բերանը  
պինդ սեղմել:

## 5.

Հետեւյալ առավոտ տիրուհին զարթնեց բավական ուշ:  
Գավրիլն սպասում եր նրա զարթնելուն, վորպեսզի Գերասի-  
մի տան վրա հարձակվելու հրաման տա, իսկ ինքը պատրաստ-  
վում եր տիրուհու հանդիմանություններն ու նախատինքը լը-  
սելու: Բայց վոչինչ ել չեղավ: Անկողնում պառկած տիրուհին  
հրամայեց իր մոտ կանչել աղջկներից մեկին:

— Լյուբով Լյուբիմովսա, — սկսեց նա հանդարտ և թույլ  
ձայնով. — (սիրում եր նա յերբեմն հալածված ու վորբացած,  
թշվառ ձեանալ, ել ինչ ասել կուզի, վոր այդ ժամանակ տան  
բոլոր մարդկի իրենց անհարմար եյին զգում). — Լյուբով Լյու-  
բիմովսա, տեսնում եք ինչ դրության մեջ եմ՝ գնացեք, հոգիս,  
Գավրիլ Անդրեյիչի մոտ, խոսեք նրա հետ. միթե մի շուն նրա  
համար ավելի թանգ ե իր տիրուհու հանդստությունից ու  
կյանքից: Յես չեյի կամենա այդ բանին հավատալ, — սվելաց-  
րեց նա խորապես հուզված. — գնացեք, հոգիս, բարի յեղեք, գը-  
նացեք Գավրիլ Անդրեյիչի մոտ:

Լյուբով Լյուբիմովսան գնաց Գավրիլի սենյակը: Հայտ-  
նի չե ինչ խոսք ու զրույց յեղավ նրանց մեջ, բայց մի քիչ  
անց մարդկանց մի ահագին ամբոխ բակի միջով շարժվեց գե-  
պի Գերասիմի խուցը: Առջևից գնում եր Գավրիլը, նրա յեր-  
կու կողմից սպասավորներն ու խոհարարները: Լուսամուտից  
նայում եր քեռի Խվոստը և կարգադրություններ անում, այ-  
սինքն ձեռքերը շարժում եր միայն: Ամենքի յետեից թռչկո-  
տելով ու ծամածություններ անելով գնում եյին փոքրիկ տը-  
ղաներ, վորոնց մի մասն յեկել եր հարկան հայաթներից: Գե-  
րասիմի խուցը տանող սանդուղքին նստել եր մի պահակ, դը-

Ների մոտ կանգնել եյին յերկուսը. փայտավորված։ Սկսեցին սանդուղքով բարձրանալ, ու բռնեցին նրա ամբողջ յերկարությունը։ Գավրիլը մոտեցավ դռանը, բոռնցքով ծեծեց և կանչեց.

— Բաց։

Լսեց խեղղված հաջոց, բայց պատասխան չեղավ։

— Ասում եմ՝ բաց, — կը կնեց նա։

— Ախր, Գավրիլ Անդրեյիչ, — նկատեց ներքեկց Ստեփանը, — չե՞ վոր խուլ ե, չի լուսմ։  
Ամենըը ծիծաղեցին։

— Հապա ի՞նչ անենք, — ասավ վերեկց Գավրիլը։

Սյդտեղ դռան վրա ծակ տեղ կա, — պատասխանեց Ստեփանը. — փայտով շարժեցեք ենպես։

Գավրիլը կռացավ։

— Նա ծակը ի՞նչ-վոր վերարկու յե կոխել։

— Դուք ել վերարկուն դեպի ներս բոթեցեք։

Նորից խուլ հաջոց լսվեց։

— Տես, տես, ինքն իրան մատնում ե, — նկատեցին ամբոխի մեջ և նորից ծիծաղեցին։

Գավրիլը ականջի յետեղ բորեց։

— Զե, ախար, ասավ նա վերջապես, — վերարկուն բոթիր ինքդ, յեթե ուզում ես։

— Լավ, համեցեք։

Յեկ Ստեփանը բարձրացավ վերև, փայտը վերցրեց, վերարկուն հրեց ներս և սկսեց փայտը ծակի մեջ խաղացնելով՝ կրկնել. «Դուքս արի, դուքս արի»։ Նա դեռ փայտը տարուքերում եր, յերբ հանկարծ խուցի դուռն արագ բացվեց. սպասավորների ամբողջ խումբը զիմիվայր գլորվեց սանդուղքից, ու ամենից առաջ Գավրիլը։

— Դե, դե, դե, — կանչեց Գավրիլը ներքեկց. — խելոք կաց, այս։

Գերասիմն անշարժ կանգնեց շեմքում։ Ամբոխը հավաքվեց սանդուղքի վոաների մոտ։ Գերասիմը գերմանական կաֆտան հագած այդ մանր մարդկանց նայում եր բարձրից, ձեռները թեթևակի կողքերին կանթած։ Իր զյուղական կարմիր վերնաշապկով նա մի հսկա յեր թվում նրանց առաջ։ Գավրիլը մի բայլ արավ առաջ գնալու։

— Տես, այ, — ասավ նա, — չարություն մի անի։

Յեկ սկսեց նշաններով հասկացնել, վոր տիրուհին ահա նրա շունը պահանջում է անպատճառ. տուր այդ շունը իսկույն, յեթե վոչ վատ կլինի։

Գերասիմը նայեց նրան, ցույց տվեց շունը, ձեռը տառվ-բերեց իր վզի մոտ այսպես, կարծես ողակ եր գցում, ու հարցական դեմքով նայեց ծառայողների ավագին։

— Այս, այս, — ասավ Գավրիլը զլուկը շարժելով, — անպատճառ։

Գերասիմն աչքերը ցած քցեց, հետո հանկարծ ցնցվեց, կըրկին ցույց տվեց Մումույին (վոր բոլոր այդ ժամանակը նրա մոտ կանգնած պոչը շարժում եր անմեղ և ականջները խլցում), նորից իր վզի վրա խեղղելու նշան ցույց տվեց և նշանակալից ձեռվ ձեռը խփեց իր կրծքին, վորով կարծես հայտարարում եր, վոր ինքն իր վրա յե վերցնում Մումույին վոչնչացնելու գործը։

— Զե, դու կխարես, — շարժեց ձեռը Գավրիլը իբրև պատասխան։

Գերասիմը նայեց նրան, արհամարանքով ծիծաղեց, կըրկին ձեռը կրծքին խփեց և դուռը շրխկոցով փակեց։

Բոլորը լուս իբրաք նայեցին։

— Սա ի՞նչ ե նշանակում, — սկսեց Գավրիլը, — նորից փակվեց։

Թողեք, Գավրիլ Անդրեյիչ, — ասավ Ստեփանը, — նա

ների մոտ կանգնել եյին յերկուսը. փայտավորված։ Սկսեցին սանդուղքով բարձրանալ, ու բռնեցին նրա ամբողջ յերկարությունը։ Գավրիլը մոտեցավ դռանը, բռունցքով ծեծեց և կանչեց.

— Բաց։

Լսվեց խեղդված հաջոց, բայց պատասխան չեղավ։

— Ասում եմ՝ բաց, — կը կնեց նա։

— Ախր, Գավրիլ Անդրեյիչ, — նկատեց ներքեից Ստեփանը, — չե՞ վոր խուլ ե, չի լսում։

Ամենքը ծիծաղեցին։

— Հապա ի՞նչ անենք, — ասավ վերեից Գավրիլը։

Այդտեղ դռան վրա ծակ տեղ կա, — պատասխանեց Ստեփանը. — Փայտով շարժեցեք ենպես։

Գավրիլը կուցավ։

— Նա ծակը ինչ-վոր վերարկու յե կոխել։

— Դուք ել վերարկուն դեպի ներս բոթեցեք։

Նորից խուլ հաջոց լսվեց։

— Տես, տես, ինքն իրան մատնում ե, — նկատեցին ամբոխի մեջ և նորից ծիծաղեցին։

Գավրիլը ականջի յետեղ բորեց։

— Չե, ախուզեր, ասավ նա վերջապես, — վերարկուն բոթիր ինքդ, յեթե ուզում ես։

— Լավ, համեցեք։

Յեկ Ստեփանը բարձրացավ վերև, փայտը վերցրեց, վերարկուն հրեց ներս և սկսեց փայտը ծակի մեջ խաղացնելով կրնել. «Դուքս արի, դուքս արի»։ Նա դեռ փայտը տարուբերում եր, յերբ հանկարծ խուցի դռան արագ բացվեց. սպասագործների ամբողջ խումբը դիմիվայր պորվեց սանդուղքից, ու ամենից առաջ Գավրիլը։

— Չե, դե, դե, — կանչեց Գավրիլը ներքեից. — խելոք կաց, այ…

Գերասիմն անշարժ կանգնեց շեմքում։ Ամբոխը հավաքվեց սանդուղքի վոտների մոտ։ Գերասիմը գերմանական կաֆտան հագած այդ մանը մարդկանց նայում եր բարձրից, ձեռները թեթևակի կողքերին կանթած։ Իր զյուղական կարմիր վերնաշապկով նա մի հսկա յեր թվում նրանց առաջ։ Գավրիլը մի քայլ արավ առաջ գնալու։

— Տես, այ, — տսավ նա, — չարություն մի անի։

Յեկ սկսեց նշաններով հասկացնել, վոր տիրուհին ահա նրա շունը պահանջում է անպատճառ. տուր այդ շունը իսկույն, յեթե վոչ վատ կլինի։

Գերասիմը նայեց նրան, ցույց տվեց շունը, ձեռը տարավ-բերեց իր վզի մոտ այնպես, կարծես ոզակ եր զցում, ու հարցական դեմքով նայեց ծառայողների ավաղին։

— Այս, այս, — տսավ Գավրիլը գլուխը շարժելով. — անպատճառ։

Գերասիմն աչքերը ցած քցեց, հետո հանկարծ ցնցվեց, կը կին ցույց տվեց Մուժույին (վոր բոլոր այդ ժամանակը նրա մոտ կանգնած պոչը շարժում եր անմեղ և ականջները խլցում), նորից իր վզի վրա խեղդելու նշան ցույց տվեց և նշանակալից ձեռվ ձեռը խփեց իր կրծքին, վորով կարծես հայտարարում եր, վոր ինքն իր վրա յե վերցնում Մուժույին վոչնչացնելու գործը։

— Չե, զու կխարես, — շարժեց ձեռը Գավրիլը իբրև պատասխան։

Գերասիմը նայեց նրան, արհամարանքով ծիծաղեց, կը կին ձեռը կրծքին խփեց և զուռը շրխկոցով փակեց։

Բոլորը լուս իրար նայեցին։

— Աս ի՞նչ ե նշանակում, — սկսեց Գավրիլը, — նորից փակվեց։

— Թողեք, Գավրիլ Անդրեյիչ, — ասավ Ստեփանը, — նա

ասածը կանի, յեթե խոստանում ե: Նրա բնավորությունն եղաւ ե: Յեթե խոստանում ե—ել պրծավ: Եղ բանումնա մեզնը-ման չի. ինչ վոր ճիշտ ե, ճիշտ ե: Այս:

— Այս,—կրկնեցին բոլորը և գլուխները թափ տվին:—Եղաւ ե, այս:

— Եհ, գուցե, տեսնենք,—ասավ Գավրիլը.—Իսկ մեկը թող ելի մնա ղարառւ: Յեկ, Յերոշկա,—ավելացրեց նա, դիմելով ինչ-վոր խեղճ մարդու, վոր այգեպան եր համարվում. —մի բան վոր գործ չունիս, փայտը վերցրու և այստեղ նըստիր. հենց վոր մի բան յեղափ, իսկույն վազի իմ կուշտը:

Յերոշկան փայտը վերցրեց և նստեց սանդուղքի առաջին աստիճանին: Ամբոխը ցրվեց, բացի մի քանի հետաքրքիրներից ու փոքրիկ տղաներից. իսկ Գավրիլը վերադարձ տուն և հրաժայեց աղջկերանց մեկի միջոցով հայտնել տիրուհուն, վոր ամեն ինչ կատարված ե:

## 6.

Այս իրարանցումից մի ժամ հետո խուցի դուռը բացվեց և Գերասիմը դուրս յեկավ. նա հագել եր իր տոնական կաֆտանը: Նա իր հետ դուրս բերեց Մումուլին վիզը թոկ գրած: Յերոշկան մի կողմ քաշվեց և նրան ճանապարհ տվեց անցնելու: Գերասիմը գնաց գեպի բակի դուռը: Հայաթում յեղած փոքրիկ տղաները լուս, աչքերով հետևեցին նըստան: Գերասիմը նույնիսկ յետ չնայեց, զիխարկը ծածկեց միայն փողոցում: Գավրիլը նույն Յերոշկային ուղարկեց նրա յետեից նայելու: Յերոշկան, հեռվից տեսնելով, վոր Գերասիմը շան հետ միասին ճաշարան մտավ, սպասեց նրա դուրս գալուն:

Ճաշարանում Գերասիմին ճանաշում և նրա նշանները հասկանում եյին: Նա իր համար մսով՝ կերակուր խնդրեց և նըստեց արմունկներով սեղանին հենված: Մումուն կանգնած նրա աթոռի մոտ՝ խելացի աչքերով նայում եր նրան: Նրա մազերը լավ հարթված եյին. յերեռմ եր, վոր քիչ առաջ նրան սամնը են: Գերասիմին կերակուր բերին: Նա հաց փրթեց նրա մեջ, միսը կտոր-կտոր արավ և տփսեն դրեց հատակին: Մումուն սկսեց ուտել իր սովորական բարեկիրթ ձևով, դունչը հազիվ կերակրին մոտեցնելով: Գերասիմը յերկար նայում եր նրան, հանկարծ արցունքի յերկու խոշոր կաթիլ ընկան նրա աչքերից. մեկն ընկավ շան թեք ճակատին, մյուսը կերակրի մեջ: Նա դեմքը ծածկեց ձեռքով: Մումուն կերավ կերակրի կեսը և մի կողմ քաշվեց դունչը լիզելով: Գերասիմը յելավ տե-

դից, վճարեց կերակրի զինը և դուրս յեկավ։ Յերոշկան Գերասիմին տեսնելով՝ ցատկեց անկյունի մյուս կողմը, և յերբ Գերասիմն յեկավ անցավ իր մոտով, նա կրկին հետևեց նրան։

Գերասիմը գնում եր առանց շտապելու, Մումույի թոկը բռնած։ Համելով փողոցի անկյունը, նա կանգ առավ կարծես մտածունքի մեջ և հանկարծ արագ քայլերով դիմեց դեպի գետը։ Ճանապարհին նա մտավ նոր կառուցվող մի տան բակ և այնտեղից յերկու աղյուս բերեց կանատակը դրած։ Համելով գետը, նա ափով դնաց-հասավ մի տեղ, ուր ցցերին կապված յերկու նավակ եյին կանգնած։ Նա Մումույի հետ միասին ցատկեց զրանցից մեկի մեջ։ Բանջարանոցի ծայրում խփված վրանից դուրս յեկավ մի կաղ ծերուկ և պոռաց նրա վրա։ Բայց Գերասիմը գլխով արավ միայն և այնպես ուժեղ թիավարել սկսեց, վոր, թեև գետի հոսանքին հակառակ, մի ակնթարթում հարյուր սաժեն առաջ սլացավ։ Ծերուկը կանգնեց, կանգնեց, մեջքը քորեց նախ ձախ, ապա աջ ձեռքով և կաղալով վերադաշտավ նորից իր վրանը։

Գերասիմը շարունակ թիավարում եր ու թիավարում։ Ահա Մուկվան արդեն յետ մնաց։ Ահա գետի ափերին տարածվում են մարգաղետիններ, բանջարանոցներ, գաշտեր պուրակներ, յերևացին խրճիթներ։ Գյուղի հոտ և գալիս։ Գերասիմը թիերը ձգեց, զուխը սեղմեց Մումույին, վոր նստած եր նրա առջե չոր տախտակի վրա—հատակը լցված եր ջրով—և այդպես մնաց անշարժ, ուժեղ բազուկներով շան մեջքը զրկած։ Իսկ նավակը մինչ այդ ալիքներով կամաց-կամաց տարփում եր յետ գետի քաղաք։ Վերջապես Գերասիմն ուղղվեց արագ և ինչ-վոր ցավագին մի կատաղություն դեմքին, վերցրած աղյուսները թուլով կապեց իրար, հետո թոկի ծայրերը կապեց Մումույի վիզը. բարձրացրեց ու բռնեց նրան գետի վրա ու վերջին անգամ նոյեց նրան... Մումուն հավատով-ու աներկյուղ նայեց աիրով և պոչը շարժեց կամացուկ։ Գերասիմը յերեսը շուռ

տվեց, աչքերը փակեց և ձեռքերը բաց թողեց... Ու չլոեց վոչինչ—վահ ընկնող Մումույի սուր կլամչոցը, վահ ել ջրի ծանը ճղվյունը, ամնեստաղմկոտ որը լուս ու անշշուկ եր նրա համար, ինչպես վոչ մի խաղաղ գիշեր անձայն չե մեզ համար։ և յերբ նա աչքերը բաց արավ նորից, առաջվա պես գետի յերեսով, կարծես միմյանց հալածելով շտապով վաղում եյին փոքրիկ ալիքները և առաջվա պես ճողփյունով զարնվում եյին նավակի կողերին, և միայն հեռուն, գեղի ափն եյին վազում ինչ-վոր լայն-լայն կորագծեր։

Յերօշկան, հենց վոր Գերասիմը թագնվեց նրա աչքից, վերադաշտավ տուն և պատմեց ինչ տեսել եր։

— Դե, իհարկ ե, — նկատեց Ստեփանը, — Գերասիմը նրան ջուրը կծգի։ Արդեն կարող եք հանգիստ լինել, քսմի վոր խոստացել ե...

Ամբողջ որը Գերասիմը չերեաց։ Նա ճաշվա հացին չեկավ։ Յերեկոյան ել, յերբ բոլորը հավաքվեցին ընթրիքի—նա չկար։

— Ի՞նչ զարմանալի տղա յե եդ Գերասիմը, — խոսեց հասպելի լվացարարուհին իր նման ձղձղալով, — միթե կարելի յե մի շան համար եղանակ գնալ ման-գալ... Չեմ հասկանում...

— Ախր Գերասիմն եստեղ եր, — գոչեց հանկարծ Ստեփանը, գդալով իր համար քաշովի վերցնելով։

— Ինչպես Յերբ։

— Յերկու սահաթ առաջ ինչպես չե. փողոցի գուման մոտ պատահեցինք։ Նա եստեղից եր գնում։ հայաթից նոր եր գուրս զալի։ Ուզեցի շան մասին հարցնեմ—քեֆը տեղը չեր։ Ինձ ել բոթեց։ ինչպես յերեռմ՝ ե՛ ուզում եր ասել—հեռու, մի խոսի, ու մի ենալես զմբուզ հասցրեց վզակոթիս, վոր—ոյ, ոյ, ոյ...—Յեվ Ստեփանն ակամա քմծիծաղով կուչ յեկավ ու վիզը քորեց։

Բոլորը ծիծաղեցին Ստեփանի վրա և ընթրիքից հետո զնացին քնելու։

Մինչդեռ նույն այդ ժամանակ Տ.—ի խճուղով շտապով  
և առանց կանգ առնելու քայլում եր մի ինչ-վոր հսկա՝ պարկը  
մեջքին ու մի յերկար ձեռնափայտ ձեռին։ Դա Գերասիմն  
եր։ Նա գնում եր առանց յետ նայելու, շտապում եր տուն,  
իրենց գյուղը։ Խեղճ Մումույին ջուրը ձգելուց հետո նա  
վաղեց իր խուցը, հապճեպով մի քանի բան-ման հավաքեց  
զրեց հին տաղճակի մեջ, կապոց արավ, ուսը զցեց ու հայ-  
դա։ Ճանապարհը նա լավ դիտել եր գեռ այն ժամանակ,  
յերբ իրեն բերին Մասկվա։ Այս գյուղը, վորտեղից տիրուհին  
բերել եր նրան, ընկած եր խճուղուց քսանուհինդ վերստ  
հեռու։ Նա գնում եր մի անընկճելի խիզախությամբ, կա-  
տաղի և ուրախ վճռականությամբ։ Գնում եր, ու նրա աչքերն  
ազահաբար և ուղիղ նայում եյին առաջ։ Նա շտապում եր  
այնպես, կարծես պառավ մայրը սպասում եր նրան հայրենի  
գյուղում, կարծես կանչել եր իր մոտ ոտար յերկրում և  
ոտար մարդկանց մեջ յերկար թափառելուց հետո... Հենց  
նոր իշած ամառային գիշերը խաղաղ եր և տաք. մի կողմից,  
այնտեղ, ուր արել մայր մտավ, յերկինքը գեռ սպիտակին  
եր տալիս և թեթեակի կարմրած եր անհետացող որվա վեր-  
ջին ցոլքերով։ Մյուս կողմից բարձրանում եր գորշ-կապույտ  
աղջամուղջը։ Հարյուրավոր լորեր աղմկում եյին ամեն կողմ,  
և նրանց հետ մրցելու համար կարծես ջրահավերը ձախար-  
կում եյին իրար... Գերասիմը սակայն նրանց լոել չեր կա-  
րող. նա չեր կարող լսել նաև գիշերային մեղմ սոսափյունը

ծառերի, վորոնց կողքով անցնում եր. բայց նա զգում եր  
համառ հաճարի ծանոթ հոտը, վոր բուրում եր շարունակ  
մութ դաշտերից, զգում եր, թե ինչպես քամին, իր հայրենի  
քամին, քնրշաբար զարնվում եր իր յերեսին և խաղում  
մաղերի ու միրուքի հետ. տեսնում եր իր առաջ սպիտակին  
տվող ճանապարհը, իրանց տան ճանապարհը, վոր ձգվում  
եր նետի պես ուղիղ. նա տեսնում եր յերկնքում անթիվ  
ասաղեր, վոր լուսավորում եյին նրա ուղին, և առյօնծի  
նման քայլում եր նա առույդ ու կայտառ, այնպես վոր յերբ  
ծագող արեգակը իր տամուկ-կարմիր շողերով լուսավորեց  
մեծ քայլերով հեռացող հսկային—Մասկվայի և նրա միջև  
ընկած եր արգեն յերեսուն ու հինգ վերստ...

Յերկու որից հետո նա իր տանն եր արդեն, ի մեծ զար-  
մանս այն զինվորի կնոջ, վորին տեղավորել եյին նրա խըր-  
ճիթում։ Սրբապատկերի առաջ աղոթելուց հետո նա գնաց  
տանուտերի մոտ։ Տանուտերը մի քիչ զարմացավ. բայց խոտ-  
հունձը հենց նոր սկսվել եր. Գերասիմին, վորպես ընտիր  
մշակի, հենց այդտեղ ձեռը գերանդի տվին, և նա առաջվա-  
պես, գնաց հունձ անելու, այնպես վոր գյուղացիները նախան-  
ձում եյին միայն, տեսնելով նրա ձեռի թափն ու հնձած  
լսաերը...

Իսկ Մասկվայում, Գերասիմի վախչելու հետևյալ որը,  
տան սպասավորներն զբաղվեցին նրանով։ Գնացին նրա խուցը,  
ման յեկան, հետո հայտնեցին Գավրիլին։ Նա յեկավ, նայեց,  
ուսերը վեր քաշեց .և վճռեց, վոր համբը կամ փախել ե կամ  
խեղպվել իր շան հետ միասին։ Իմաց տվին վոստիկանու-  
թյան, հայտնեցին տիրուհուն։ Տիրուհին բարկացավ. լաց  
յեղավ և հրամայեց, ինչ ել լինի՝ գտնել նրան, հավատացրեց,  
վոր ինքը յերբեք չի հրամայել շունը վոչնչացնել և, վերջա-  
պես, այնպես մի շաղեց Գավրիլին, վոր նա ամբողջ որը  
վլուխը շարժում եր և ասում. «Հը՛մ»...

Վերջապես զյուղից լուր յեկավ, թե Գերասիմն այնտեղ է: Տիրուհին մի քիչ հանգստացավ. սկզբում ուզում եր հրամայեր վոր նրան տնմիջապես յետ բերեն Մասկվա, բայց հետո հայտնեց, վոր այդտեսակ ապերախտ մարդը իրեն սկի հարկավոր չի: Ասենք, դրանից հետո նա ինքը շուտով մեռավ, իսկ ժառանգների բան ու գործը Գերասիմը չեր, նրանք մոր մսացած ծառայողներին ել բաց թողին:

Յեվ մինչև այսոր Գերասիմն ապրում ե մենամենակ իր մենավոր խրճիթում. նա առողջ ե ուժեղ ե առաջվա պես, մենակ չորս մարդու բան ե անում ու առաջվա պես ելի լուրջ ու ծանր ե: Բայց հարեանները նկատել են, վոր նա Մասկվայից վերադառնալուց հետո վոչ մի շուն չի պահում իր մոտ: «Ասենք, — խռում են զյուղացիները, — շունը նրա ինչին ե պետք. գողին զոռով ել չես կարող տանել նրա դուռը»:


Այս համբավն ե պտտում համբի հսկա ուժի մասին:



125

3n

94



ԳԻՒՆ Ե 15 ԿՈՊ.

12



14.420